

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՕԼԻՄՊԻԱԴԱ  
ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈԻԼ 2020-2021  
6-րդ դասարան,  
Տևողությունը 150 րոպե

1. Արամը ժամը 9-ին տանից դուրս եկավ և շարժվեց դեպի գրադարան 6կմ/ժ արագությամբ: Հասնելով գրադարան՝ նա անմիջապես հետ վերադարձավ դեպի տուն՝ չփոխելով իր արագությունը: Ժամը 12-ին Արամին դեռ 2կմ կար տուն հասնելուն: Տնից քանի՞ կմ հեռավորության վրա է գտնվում գրադարանը:

- 1) 8                      2) 16                      3) 10                      4) այլ պատասխան

2. Բնական թվի երկու թվանշաններ, որոնք գրված են կողք-կողքի, կանվանենք բարեկամ, եթե նրանց տեղերը փոխելուց թիվը մեծանում է: Ամենաշատը քանի՞ թվանշան կարող է ունենալ թիվը, եթե նրա բոլոր թվանշաններից միայն մի գույգը բարեկամ չեն:

- 1) 19                      2) 20                      3) 21                      4) այլ պատասխան

3. Արամը, Նարեն և Վարդանը գնեցին գիրք: Արամը վճարեց գրքի գնի 60 տոկոսը, Նարեն մնացածի 40 տոկոսը, իսկ Վարդանը մնացած 30 դրամը: Ի՞նչ արժե գիրքը:

- 1) 125                      2) 130                      3) 112                      4) այլ պատասխան

4. ԱԱԱԱ + ԲԲԲ + ԳԳ + Դ=2030: Գտնել Ա·Բ·Գ·Դ արտադրյալը: (Ա-ն,Բ-ն,Գ-ն,Դ-ն թվանշաններ են):

- 1) 0                      2) 144                      3) 25                      4) այլ պատասխան

5. Բնական թիվը կազմված է 2021 թվանշաններից, ընդ որում առաջին թվանշանը 2 է, վեցինը՝ 3, իսկ մնացած թվանշանները 9 են: Յուրաքանչյուր քայլում իրար են գումարում առաջին երկու թվանշանները և ստացված գումարը գրում նրանց փոխարեն: Քայլերն ավարտվում են, երբ գրատախտակին կմնա մեկ թվանշան: Ո՞րն է այդ թվանշանը:

- 1) 2                      2) 3                      3) 5                      4) 9

6. Երկնիչ բնական թվի և նույն թվանշաններով, բայց հակառակ կարգով գրված թվի գումարը 143 է: Քանի՞ այդպիսի թիվ կա:

- 1) 6                      2) 3                      3) 1                      4) այլ պատասխան

7. Կենսաբանը 150 բզեզները տեղավորել է իրար կողք-կողքի դրված 10 բանկաներում հետևյալ կերպ՝ յուրաքանչյուր հաջորդ բանկայում ավելի շատ բզեզ կա քան նախորդում, իսկ առաջին բանկայի բզեզների քանակը պակաս չէ 10-րդ բանկայի բզեզների կեսից: Քանի՞ բզեզ կա 6-րդ բանկայի մեջ:

- 1) 15                      2) 14                      3) 10                      4) 16

8. 2021-անիչ բնական թվի մեջ յուրաքանչյուր կողք-կողքի երկու թվանշաններով գրված երկնիչ թիվը բաժանվում է 17-ի կամ 23-ի: Վերջին թվանշանը 1 է: Գտնել առաջին թվանշանը:

- 1) 5                      2) 9                      3) 3                      4) այլ պատասխան

9. Գրատախտակին գրված են 5 իրարից տարբեր բնական թվեր: Նրանց բոլոր հնարավոր գույգերի գումարները հետևյալ թվերն են՝ 4;5;6;7;8;9;11;13;14;15: Գտնել այդ թվերից ամենամեծը:

1)11

2) 9

3) 10

4) այլ պատասխան

10. Քառակուսի հատակով սենյակը սալիկապատում են քառակուսի սալիկներով: Միայն հատակի եզրերով շարելիս օգտագործվեց 84 սալիկ: Քանի՞ սալիկ է հարկավոր ողջ հատակը սալիկապատելու համար:

1)484

2) 441

3) 400

4) այլ պատասխան

11. A և B վայրերի հեռավորությունը 600 մետր է: Միաժամանակ միմյանց ընդառաջ շարժվեցին երկու հոտիոտն: Եթե առաջինը շարժվեր 2 անգամ դանդաղ, իսկ երկրորդը 2 անգամ արագ, ապա կհանդիպեն ճանապարհի մեջտեղում: Քանի՞ մետր էր անցել առաջին հետիոտնը հանդիպման պահին:

12. Ֆուբոլի առաջնությանը մասնակցում է 5 թիմ, որոնցից յուրաքանչյուրը մյուսների հետ խաղաց մեկական խաղ: Հաղթանակի համար տրվում է 3, ոչ-ոքիի համար 1, իսկ պարտության դեպքում 0 միավոր: Պարզվեց, որ թիմերից չորսը հավաքել են համապատասխանաբար՝ 1;2;5;7 միավոր: Քանի՞ միավոր է հավաքել հինգերորդ թիմը:

13. Վարդանը 20 տոկոսով քիչ գիրք ունի Արամից, իսկ Արամը 25 տոկոսով քիչ գիրք ունի Նարեից: Քանի՞ գիրք ունեն նրանք միասին, եթե Վարդանն ունի 36 գիրք:

14. A կետից հակառակ ուղղություններով միաժամանակ դուրս եկան հետիոտնը և հեծանվորդը: Տասը ռոպե հետո հեծանվորդը անմիջապես շրջվեց և սկսեց շարժվել հետիոտնի ուղղությամբ: A-ից դուրս գալուց քանի՞ ռոպե հետո նրանք կհանդիպեն, եթե հեծանվորդի արագությունը երկու անգամ մեծ է հետիոտնի արագությունից:

15. A և B երկու անոթները լցված են որոշ քանակությամբ ջրով: Երբ A-ի պարունակության մեկ չորրորդը լցրեցին B-ի մեջ, իսկ այնուհետև B-ի մեկ երրորդը A-ի մեջ, պարզվեց, որ անոթներում ջրի քանակները հավասարվեցին: Քանի՞ անգամ է B անոթի ջրի սկզբնական քանակը շատ A անոթի ջրի սկզբնական քանակից: